Պարույր Սևակ

Կապիկը

Մի ժամանակ մարդ է եղել Կապիկը,
Բայց կեղտոտ է միշտ էլ եղել շապիկը,
Որովհետև ներկարար է նա եղել:
Միշտ կանչել են մե՛ր տուն - ձե՛ր տուն՝լավ տեղե՛ր,
Ու շա՞տ լավ էլ վարձ է առել Կապիկը,
Որ պա՛տ ներկի,
Վա՛տ չներկի,
Որ ներկի դո՛ւռ ,
Բայց ո՛չ անդուր,
Տարբե՛ր բաներ՝ տարբե՛ր գույնով,
Ո՛չ թե նույնը մի՛շտ էլ նույնով:
Իսկ ներկարար մեր Կապիկը՝անփույթը,
Ունեցել է միայն կարմիր-կապույտը,
Ու ներկել է ո՛չ այնքան մեր հատակը,
Որքան իր պոչի տակը,
Ո՛չ այնքան մեր պատերը,
Որքան հենց իր մատերը:
Եվ մի օր էլ, երբ մարդկանց
Հոգուն է նա հասցրրել,
Բոլորը մեկ հավաքվել են ժողովի,
Էլ չե՛ն թողել, որ ճղավի-բղավի,

Ո՛չ էլ ուզել կամ չուզելն են հարցըրել
Ու... կապիկ են դարձրել:
Չե՞ք հավատում՝գազանանոց գնացեք
Ու կտեսնեք, որ կապիկի պոչի տակ
Մինչև հիմա դեռ կարմիրն է մնացել,
Իսկ մատների եղունգի տակ անփույթը
Մինչև հիմա չի լվացել կապույտը...